

2.4. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

2.4.1. Ազգային հաշիվների համակարգ

Հայաստանում ազգային հաշիվների հաշվարկի մեթոդաբանությունը հիմնված է Արժույթի միջազգային հիմնադրամի, Միավորված ազգերի կազմակերպության, Համաշխարհային բանկի, Եվրոպական համագործակցության հանձնաժողովի ու Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից համատեղ մշակված և որպես միջազգային ստանդարտ ընդունված սկզբունքների և մեթոդաբանության «Ազգային հաշիվների համակարգ-93» վերանայված տարբերակով, ինչպես նաև «Եվրոպական հաշիվների համակարգ-95» միջազգային մեթոդաբանությունների հիմքերի վրա:

Ազգային հաշիվների համակարգի կազմման առումով իրականացվել են հետևյալ միջոցառումները.

Իրականացվել են Հայաստանի Հանրապետության ազգային հաշիվների, համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) և այլ մակրոտնտեսական ցուցանիշների ամբողջ տնտեսության, ինչպես նաև կառուցվածքային հատվածների և տնտեսական գործունեության տեսակների մակարդակով վիճակագրության վարման, հաշիվների կազմման աշխատանքներ:

Իրականացվել է ազգային հարստության բաղադրիչների վիճակագրության վարում և կատարելագործում, մասնավորապես կազմվել է վիճակագրական մշտադիտարկման դաշտում ընդգրկված կազմակերպությունների և պետական հիմնարկների հիմնական միջոցների հաշվեկշիռն ըստ հաշվետու տարիների (հաշվեկշռային և մնացորդային արժեքներով)՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների,

Շարունակվել են ազգային հաշիվներում տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի ներդրման աշխատանքները, և անցում է կատարվել ազգային հաշիվներում կիրառվող՝ ՏԳՏՀԴ խմբ.1.1-ի դասակարգումից ՏԳՏՀԴ խմբ.2 դասակարգմանը:

Շարունակվել էն ազգային հաշիվների ֆինանսական և ոչ ֆինանսական կազմակերպությունների հատվածների՝ ըստ ենթահատվածների, ավելացված արժեքի (արտադրական եղանակով) տարեկան ծավալների հաշվարկների մեթոդաբանության կատարելագործման ուղղությամբ աշխատանքների իրականացումը:

Ազգային հաշիվների հիմնական ցուցանիշները, այդ թվում՝ ՀՆԱ-ն, սկսած 2011 թվականից հրապարակվում են միայն եռամսյակային և տարեկան պարբերականությամբ:

ՀՆԱ-ի ամբողջականության բարելավման նպատակով շարունակվել են «Չդիտարկվող տնտեսության» չափերի գնահատման մեթոդաբանության կատարելագործման նպատակով իրականացվող միջոցառումները, մասնավորապես՝ 2011-2012 թվականների ընթացքում իրականացվել են Ազգային հաշիվների բաղադրիչների հաշվարկների համար եվրոպական

Աղյուսակային մոտեցմամբ «Չդիտարկվող տնտեսության» չափերի գնահատման մեթոդաբանության ներդրման աշխատանքներ:

Ազգային հաշիվների համակարգ 2008-ի ներդրման շրջանակներում իրականացվել են միջոցառումներ ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայությունների գնահատման մեթոդաբանության կատարելագործման ուղղությամբ:

Հրապարակվել են Հայաստանի Հանրապետության ազգային հաշիվների բաղադրիչները ներկայացնող վիճակագրական ժողովածուները՝ հայերեն և անգլերեն (տարեկան և եռամսյակային կտրվածքով):

2.4.2. Արդյունաբերություն

Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչով սահմանված գործունեության տեսակների ամբողջական ներդրման նպատակով, շարունակվել են վիճակագրական դիտարկման դաշտում ընդգրկված, ինչպես նաև նոր ընդգրկվող արդյունաբերական կազմակերպությունների կողմից իրականացվող գործունեության տեսակների ծածկագրման և վերածածկագրման աշխատանքները:

Ամբողջովին ավարտվել են ինչպես արտադրատեսակների անվանումների ու դրանց չափի միավորների՝ «Արտադրանքի դասակարգում՝ ըստ գործունեության տեսակների» ազգային դասակարգչին համապատասխանեցման, այնպես էլ հաշվառվող արտադրատեսակների վերածածկագրման աշխատանքները:

2010 թվականից արդյունաբերության վիճակագրության վարումն իրականացվել է ըստ Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի (SԳՏՀԴ-ի խմբ. 2-ի):

Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչով սահմանված գործունեության տեսակների ամբողջական ներդրման նպատակով շարունակվել են վիճակագրական դիտարկման դաշտում ընդգրկված, ինչպես նաև նոր ընդգրկվող արդյունաբերական կազմակերպությունների կողմից իրականացվող գործունեության տեսակների ծածկագրման և վերածածկագրման աշխատանքները:

Սահմանված պարբերականությամբ (ամսական, եռամսյակային, տարեկան) մշակվել և ամփոփվել են արդյունաբերությունը բնութագրող հիմնական ցուցանիշներն ըստ հանրապետության, մարզերի և Երևան քաղաքի, տնտեսական գործունեության տեսակների, արտադրատեսակների, ինչպես նաև եռամսյակային պարբերականությամբ՝ ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի:

2011 թվականից արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսների հաշվարկը (հաշվետու ամիսը նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ,

հաշվետու ամիսը նախորդ ամսվա նկատմամբ), ըստ ՏԳՏՀԴ-ի B, C, D, E բաժինների բոլոր գործունեության տեսակներով իրականացվել է արդյունաբերողների գների ինդեքսների հիման վրա:

Վիճակագրական գործիքակազմի արդիականացման և կիրառվող դասակարգիչներին համապատասխանեցման նպատակով 2011 թվականի ընթացքում վերանայվել են «Արդյունաբերական կազմակերպությունների արտադրանքի մասին» Ձև թիվ 1-արտ (ամսական և տարեկան) պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերն ու դրանց լրացման հրահանգը, կատարելագործվել են տեղեկատվության հավաքագրման, մշակման և ներկայացման մեթոդներն ու ձևերը, այդ թվում՝ ցուցանիշների հաշվարկման համար հաշվողական տեխնիկայի, տեղեկատվական ցանցերի և համակարգչային ծրագրերի լայն օգտագործմամբ: Նշված աշխատանքների իրականացումը հնարավորություն է ընձեռել զգալիորեն նվազեցնել ինչպես ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը, այնպես էլ համապատասխան աշխատանքների կատարման (մշակման) ժամկետները:

Ընտրանքային դիտարկման մեխանիզմների կիրառմանը զուգահեռ, առանձին արտադրությունների գծով (ըստ ցածր առածգականությամբ արտադրանքների արտադրության բազային ցուցանիշների) շարունակվել է իրականացվել չդիտարկվող (չհաշվառվող) դաշտի գնահատումը, օգտագործելով ինչպես տնային տնտեսությունների, այնպես էլ ընտրանքային հետազոտությունների արդյունքները:

«Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը ԹՎԻՆԻՆԳ ծրագրի միջոցով» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի շրջանակում պատրաստվել են արդյունաբերական արտադրանքի, պատրաստի արտադրանքի իրացման, արդյունաբերական արտադրանքի ինդեքսների (ամսական և տարեկան), բիզնես միտումների, ըստ արդյունաբերության 4 հիմնական բաժինների (ամսական և տարեկան) և էլեկտրահաշվեկշռի (տարեկան) թվով 15 որակի հոչակագրերը (զետեղված են Ծառայության պաշտոնական կայքէջում «Փաստաթղթավորում» բաժնում):

2.4.3. Գյուղատնտեսություն

Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի սկզբունքների և հասկացությունների ներդրման նպատակով վերանայվել և փոփոխությունների են ենթարկվել գյուղատնտեսության վիճակագրությանն առնչվող համապատասխան վիճակագրական հաշվետվական ձևերն ու դրանց լրացման հրահանգները: Մասնավորապես, տարանջատվել են պետական վիճակագրական հաշվետվական ձևերն ըստ դրանց ներկայացնողների՝ գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպությունների (ներկայացնում են պետական վիճակագրական հաշվետվություն) և համայնքների (ներկայացնում են պետական վիճակագրական ամփոփ հաշվետվություն):

Գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնորսության և ձկնաբուծության գծով վիճակագրական տեղեկությունները՝ ամսական, եռամսյակային և տարեկան պարբերականությամբ, հավաքագրվել և մշակվել են պետական և ամփոփ պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով, հարցաթերթերով ու տեղեկանքներով: Ոլորտը բնութագրող վիճակագրական տվյալները հրապարակվել են վիճակագրական ժողովածուներում, տարեգրքերում, տեղեկագրերում (յուրաքանչյուր տարի թվով 5), մամուլի հաղորդագրություններում և տեղեկատվական ամսական զեկույցներում:

Գյուղատնտեսության վիճակագրության ընտրանքային դիտարկման ցանցից (187 գյուղական համայնք, 7480 գյուղացիական տնտեսություն) հարցաթերթերի միջոցով հավաքագրվել է տեղեկատվություն տնտեսությունների կողմից արտադրված բուսաբուծական և անասնաբուծական մթերքի ծավալների, դրանց իրացման ուղղությունների, արտադրության վրա կատարված ընթացիկ ծախսերի, միջին բերքատվության և այլնի վերաբերյալ: Ցանցի վիճակագիրների կողմից յուրաքանչյուր տարի անց է կացվել հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի որակի հետազոտություն, որի արդյունքում հավաքագրված տվյալներն ամփոփվել և օգտագործվել են հացահատիկային մշակաբույսերի համախառն բերքի և միջին բերքատվության վերաբերյալ տվյալների ճշգրտման համար:

«Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը ԹՎԻՆԻՆԳ ծրագրի միջոցով» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի շրջանակում պատրաստվել են անասնազխաքանակի (տարեկան), անասնաբուծական արտադրանքի արտադրության (տարեկան, ամսական), գյուղատնտեսական տեխնիկայի սարքինության (տարեկան), գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների, համախառն բերքի և միջին բերքատվության (տարեկան), գյուղատնտեսական մշակաբույսերի համախառն արտադրանք (ամսական), համախառն գյուղատնտեսական արտադրանք (ամսական), գյուղատնտեսական արտադրանքի իրացումն ըստ ուղղվածության (տարեկան), գյուղատնտեսական արտադրանքի շուկայականացման մակարդակը (տարեկան), անտառաբուծության (եռամսյակային), ձկնաբուծության և ձկնարտադրության (ամսական) թվով 11 որակի հոչակագրեր (գետեղված են Ծառայության պաշտոնական կայքէջում, «Փաստաթղթավորում» բաժնում):

Ծառայության կողմից ՀՀ-ում գյուղատնտեսական համատարած հաշվառման (ԳՀՀ) կազմակերպման և անցկացման շուրջ իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ՝ կազմվել են հաշվառման հարցաթերթերի և դրանց լրացման հրահանգների նախագծերը, հաշվառման բյուջեի նախագիծը, ԳՀՀ իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների ցանկը, ԳՀՀ ռազմավարությունը, շահագրգիռ մարմիններին կարծիքի է ներկայացվել «Հայաստանի Հանրապետությունում 2014 թվականին գյուղատնտեսական համատարած հաշվառում, 2013 թվականին փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառում անցկացնելու և 2014 թվականին անցկացվելիք գյուղատնտեսական համատարած հաշվառման համապետական, Երևան քաղաքի և մարզային հանձնաժողովներ ստեղծելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը և «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական համատարած հաշվառման

համակարգի ներդրման հայեցակարգ»-ի նախագիծը (վերջինս մշակվել է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության հետ համատեղ: ԳՀՀ հիմնական հարցաթերթի նախագիծը, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության մասնագետների, ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Գյուղատնտեսական համատարած հաշվառում» բաղադրիչի շրջանակում Հայաստան այցելած փորձագետների և ԱՄՆ Գյուղատնտեսության դեպարտամենտի Հայաստան այցելած փորձագետների հետ համատեղ, բազմիցս ենթարկվել է դաշտային փորձաքննության հանրապետության տարբեր մարզերի մի շարք համայնքների գյուղացիական տնտեսություններում:

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը ձեռնամուխ է եղել ըստ փուլերի վարչական ռեգիստրների ձևավորմանն ու վարմանը: Դրա արդյունքում ներկայումս ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը, որը Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության համար հանդիսանում է վարչական ռեգիստր, Ծառայությանը տրամադրում է տեղեկատվություն գյուղատնտեսական մթերքի գնումների և գյուղատնտեսական տեխնիկայի առկայության վերաբերյալ: Վերը նշվածով պայմանավորված ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նորմատիվ որոշումներով ուժը կորցրած են ճանաչվել համապատասխան պետական և ամփոփ պետական վիճակագրական հաշվետվական ձևերը:

Բուսաբուծության և անասնաբուծության վերաբերյալ ստացվող տեղեկատվությունը միջազգային պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտությունից ելնելով, կատարվել են փոփոխություններ «Բերքահավաքի, կերերի կուտակման, աշնանացանի և ցրտահերկի բարձրացման ընթացքի մասին» ձև 29-ԳՏ (ամսական) և «Անասնաբուծության դրության մասին» ձև 24-ԳՏ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվություններում:

2011 թվականին հրապարակվել է «Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում, 2006-2010» (հայերեն) վիճակագրական ժողովածուն, որն արտացոլում է վիճակագրական տեղեկատվություն հանրապետության տնտեսությունների գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների, դրանցից ստացված բերքի, անասնազվխաքանակի, անասնաբուծական մթերքի արտադրության, գյուղատնտեսական մթերքի իրացման, ապրանքայնության և այլնի վերաբերյալ 2006-2010 թվականների կտրվածքով:

2.4.4. Շինարարություն

Շինարարության վիճակագրությունում Տնտեսական գործունեության տեսակների (խմբ.2) և Արտադրանքի դասակարգում ըստ գործունեության տեսակների Հայաստանի դասակարգիչների սկզբունքների և հասկացությունների ներդրման նպատակով՝ 2012 թվականին վերանայվել են շինարարության վիճակագրությանն առնչվող թվով 7 պետական վիճակագրական հաշվետվական ձևեր և դրանց լրացման հրահանգներ:

Հաշվետվական ձևերի փոփոխմամբ պայմանավորված և վիճակագրական տվյալների մշակման և ամփոփման աշխատանքների մեքենայացման նպատակով՝ մշակվել են նաև համակարգչային նոր ծրագրեր:

Վիճակագրական ցուցանիշների արժանահավատության բարձրացման համընդգրկունության ապահովման և հաշվարկային մեթոդաբանությունների կատարելագործման և որպես դրա հետևանք ու նախապայման՝ բնակչության միջոցների հաշվին իրականացվող շինարարության ծավալների ամբողջական բացահայտման ու արտացոլման նկատառումներով պայմանավորված՝ շարունակվել են անհատական բնակելի շենքերի և մասնավոր շինարարական օբյեկտների դիտարկումները (շրջագայությունների միջոցով)՝ ձևավորելով ու պարբերաբար արդիականացնելով այդ շինարարական օբյեկտների ցանկը:

Շարունակվել են աշխատանքները շինարարության վիճակագրության տեղեկատվական բազաների առավել ամբողջականացման նպատակով ռեգիստրների ձևավորման և հաշվառման ցանցի արդիականացման ուղղությամբ:

2012 թվականին հոկտեմբերին քաղաք Երևանում անհատական բնակարանային շինարարության բնագավառում հաշվառման համընդգրկվածությունը ու ամբողջականությունն ապահովելու նպատակով իրականացվել է «Անհատական բնակարանային շինարարության» միանվագ հետազոտություն:

2011 թվականին հրապարակվել է «Շինարարությունը Հայաստանի Հանրապետությունում 2006-2010 թվականներին» վիճակագրական ժողովածուն, որտեղ ներկայացված են վիճակագրական տվյալներ 2006-2010 թվականների Հայաստանի շինարարության վիճակի վերաբերյալ: Մասնավորապես, հիմնական միջոցների գործարկման, շինարարության, շինմոնտաժային աշխատանքների ծավալների և բնակելի շենքերի, սոցիալական ոլորտի օբյեկտների գործարկման վերաբերյալ, ինչպես ըստ ֆինանսավորման աղբյուրների, այնպես էլ ըստ տնտեսական գործունեության տեսակների և այլն:

2.4.5. Տրանսպորտ և կապ

Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի սկզբունքների, հասկացությունների և գործունեության տեսակների ամբողջական ու համապարփակ ներդրման, ինչպես նաև Արտադրանքի դասակարգում՝ ըստ գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի ներդրման նախադրյալների ձևավորման նպատակով, ինչպես, նաև ռեսպոնդենտների հաշվետվություններով ծանրաբեռնվածության նվազեցման ցուցանիշների կրկնորոգությունների բացառման և տեղեկատվական հոսքերի կանոնակազման անհրաժեշտությամբ պայմանավորված, վերանայվել են տրանսպորտի և կապի վիճակագրությանն առնչվող թվով 16 պետական վիճակագրական հաշվետվություններ և

դրանց լրացման հրահանգներ: Վերը նշվածով պայմանավորված, ուժը կորցրած է ճանաչվել «Կապի կազմակերպությունների մասին» Ձև թիվ 18-ԿԱՊ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու դրա լրացման հրահանգը:

Պայմանավորված Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի Հանրապետության դասակարգչում փոստային և սուրհանդակային գործունեության տեսակների վերախմբավորմամբ, սահմանումների և հասկացությունների հստակեցման, ցուցանիշների լրամշակման անհրաժեշտությամբ, մշակվել և ներդրվել է «Փոստային և սուրհանդակային գործունեության մասին» Ձև թիվ 1-ՓՈՍ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվությունն ու դրա լրացման հրահանգը, որն ուժի մեջ է մտել 2011 թվականի հունվարի 1-ից:

«Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» խորագրով ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի շրջանակում պատրաստվել են ճանապարհային տրանսպորտի (ամսական և տարեկան), երկաթուղային տրանսպորտի (ամսական և տարեկան), արդյունաբերական երկաթուղային տրանսպորտի (տարեկան), օդային տրանսպորտի (ամսական և տարեկան), էլեկտրատրանսպորտի՝ մետրոպոլիտեն, տրոլեյբուսային տրանսպորտ, ճոպանուղի (ամսական և տարեկան), փոստային և սուրհանդակային ծառայության (ամսական, եռամսյակային և տարեկան), ճանապարհատրանսպորտային պատահարների (ամսական, եռամսյակային և տարեկան), ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների (տարեկան), հեռահաղորդակցության (ամսական, եռամսյակային և տարեկան) վերաբերյալ թվով 23 որակի հոչակագրեր (զետեղված են Ծառայության պաշտոնական կայքէջում, «Փաստաթղթավորում» բաժնում):

Աշխատանքներ են իրականացվել տրանսպորտի և կապի ոլորտների վարչական ռեգիստրների կատարելագործման և վիճակագրական հաշվառման դաշտի արդիականացման ուղղությամբ:

2.4.6. Առևտուր և այլ ծառայություններ

Տնտեսական գործունեության տեսակների (ՏԳՏԴ) խմբ.2-ի և Արտադրանքի դասակարգում ըստ գործունեության տեսակների (ԱԴԳՏ) Հայաստանի դասակարգիչների ներդրմամբ, ինչպես նաև վիճակագրական տեղեկություններ տրամադրողների՝ վիճակագրական հաշվետվություններում ցուցանիշների ծանրաբեռնվածության նվազեցմամբ պայմանավորված վերանայվել են ոլորտի մի շարք պետական վիճակագրական հաշվետվական ձևեր: Մասնավորապես, փոփոխության են ենթարկվել «Ծառայությունների ծավալի մասին» Ձև թիվ 1-ծառայություններ, «Առևտրի շրջանառության մասին» Ձև թիվ 1-առևտուր», «Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական ծառայությունների մասին» Ձև 1-ՏՏ ամսական պարբերականությամբ ներկայացվող պետական վիճակագրական

հաշվետվությունների ձևերը: Մշակվել են երկու նոր պետական վիճակագրական հաշվետվական ձևեր՝ «Ծառայությունների ծավալի մասին» Ձև 1-ծառայություններ (փոքր) և «Առևտրի շրջանառության մասին» Ձև թիվ 1-առևտուր (փոքր) պետական վիճակագրական հաշվետվական ձևերը, որոնք նախատեսված են Ծառայության կողմից ընտրանքային կարգով ընտրված փոքր կազմակերպությունների կողմից ներկայացման համար:

Սկսած 2011 թվականի հունվարից, առևտրի շրջանառության և ծառայությունների ծավալի հաշվարկման կուտակային (աճողական) եղանակից անցում է կատարվել հաշվարկման ամսական (դիսկրետ) եղանակին:

Շարունակվել են աշխատանքները առևտրի և այլ ծառայությունների ոլորտի կազմակերպությունների վիճակագրական դաշտի արդիականացման ուղղությամբ:

Մանրաձախ առևտրի շրջանառության ամբողջականության ապահովման և արժանահավատության բարձրացման նկատառումներով, պարբերաբար անց են կացվել հանրապետությունում հաշվառված սպառողական ապրանքների շուկաների ընտրանքային դիտարկումներ՝ ըստ ապրանքային խմբերի (պարենային, ոչ պարենային), վաճառատների քանակի, մեկ վաճառատեղի օրական ապրանքաշրջանառության ծավալի: Ստացված արդյունքներն այնուհետ կիրառվել են առևտրի վիճակագրության գործիքակազմի ու մեթոդաբանության կատարելագործման համար:

2011 և 2012 թվականներին Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո ԹՎԻՆԻՆԳ ծրագրի շրջանակում մեկնարկված «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» երկամյա պայմանագրի «Բաղադրիչ 2. Տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների հանրության վիճակագրություն» (S<S) շրջանակում 2012 թվականի փետրվար-մարտ ամիսներին իրականացվել է փորձնական հետազոտություն, որի նպատակն էր նախադրյալներ ստեղծել կազմակերպություններում և պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններում S<S օգտագործման ամբողջական հետազոտության անցկացման համար:

Նշված նպատակի իրագործման համատեքստում, Եվրամիության անդամ երկրներում կիրառվող նույնաբովանդակ հարցաթերթի հիման վրա մշակվել է «Կազմակերպություններում տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների օգտագործման և էլեկտրոնային առևտրի մասին» Ձև 1-S<S, «Պետական և տեղական ինքնակառավարման տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման մասին» Ձև 2-S<S վիճակագրական դիտարկման հարցաթերթերը և դրանց լրացման մեթոդական ցուցումները, որոնք հաստատվել են Խորհրդի անհատական որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ փորձնական հետազոտությունն իրականացվել է կազմակերպությունների համեմատաբար փոքր ընտրանքով, արդյունքների վերլուծությունը հիմք կհանդիսանա առաջիկա ամբողջական հետազոտության իրականացման համար:

Հայաստանի Հանրապետության նախարարությունների հիմնական մասում (չի ներառվել միայն մեկ նախարարություն) իրականացված փորձնական հետազոտության արդյունքները համարվում են ներկայացուցչական նախարարությունների համար և 2012 թվականին հրապարակվել է «ՏՀՏ օգտագործումը ՀՀ նախարարություններում» վերլուծական զեկույցը մամուլի հաղորդագրության տեսքով:

2012 թվականի սեպտեմբերին ռեստորանային ծառայությունների մատուցման բնագավառում ընտրանքային հետազոտության իրականացման նպատակով մշակվել և Խորհրդի անհատական որոշմամբ հաստատվել է «Ռեստորանների ծառայությունների մասին» Ձև 1-ռեստորան միանվագ հետազոտության հարցաթերթը: Հետազոտության իրականացմամբ հնարավոր եղավ կատարելագործել ոլորտում հավաքագրվող տվյալների գնահատման և ճշգրտման գործիքակազմը, ապահովելու հաշվառման համընդգրկվածությունը և ամբողջականությունը:

Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո ԹՎԻՆԻՆԳ ծրագրի շրջանակում պատրաստվել են մանրաձախ առևտրի շրջանառության ինդեքսի (ամսական), մեծաձախ առևտրի շրջանառության ինդեքսի (ամսական), ավտոմեքենաների վաճառքի (ամսական), ծառայությունների ծավալի ինդեքսների (ամսական և եռամսյակային), ծառայությունների ծավալի ինդեքսների ըստ ծառայությունների տեսակների (ամսական), ՏՀՏ ինդեքսների (եռամսյակային) վերաբերյալ թվով 8 Որակի հոչակագրերը (հայերեն և անգլերեն) (զետեղված է Ծառայության պաշտոնական կայքէջում, «Փաստաթղթավորում» բաժնում):

Հրապարակվել է «Հայաստանի հանրապետության առևտուրը և ծառայությունները, 2012 թվական» վիճակագրական ժողովածուն (հայերեն, անգլերեն և ռուսերեն): Ժողովածուի մեջ ներկայացված է 2007-2011 թվականների Հայաստանի Հանրապետության առևտրի և 2009-2011 թվականների այլ ծառայությունների ոլորտները բնութագրող հիմնական ցուցանիշները (մասնավորապես, մանրաձախ և մեծաձախ առևտրի շրջանառությունը, ավտոմեքենաների առևտուրը, ծառայությունների ծավալներն ըստ տեսակների և այլն) համաձայն Տնտեսական գործունեության տեսակների նոր՝ 2010 թվականից կիրառվող, երկրորդ վերանայմամբ Հայաստանի դասակարգչի:

2.4.7. Գներ և սակագներ

Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի սկզբունքների և հասկացությունների ներդրման նպատակով իրականացվել է արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսների հաշվարկման մեթոդաբանության կատարելագործում. վերանայվել և կատարվել է հետազոտվող բազային արդյունաբերական կազմակերպությունների ընտրանք: Միաժամանակ, 2010-2011 թվականներին աշխատանքներ են տարվել Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի խմբագրություն 1.1-ից

խմբագրություն 2-ին անցման ուղղությամբ և սկսած 2012 թվականի հունվարից ՀՀ-ում արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսների հաշվարկներն իրականացվում են ՏԳՏԴ-ի խմբագրություն 2-ին համապատասխան: Վերոնշյալով պայմանավորված, վերանայվել է գների ինդեքսների հաշվարկման կարգը, գների դիտարկման հաշվետվական ձևը և լրացման հրահանգը, որոնք հաստատվել են Խորհրդի 2009 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 49-Ա որոշմամբ: Իրականացվել է դիտարկվող արտադրատեսակների վերակողավորում՝ դասակարգչի նոր խմբագրությանը համապատասխան:

Սպառողական գների ինդեքսների հաշվարկման մեթոդաբանության հետագա կատարելագործման նկատառումներով 2010-2012 թվականներին վերանայվել ու համալրվել են դիտարկման «զամբյուղը» ներկայացնող ապրանք (ծառայություն)- ներկայացուցիչների կազմն ու կառուցվածքը: Սպառողական զամբյուղում լրացուցիչ ներառվել են նոր ապրանք-ծառայություն-ներկայացուցիչներ՝ դրանց ընդհանուր թվաքանակը 591-ի փոխարեն 2010 թվականի հունվարին հասցնելով 619-ի, իսկ 2012 թվականի հունվարից՝ 901-ի: Ըստ այդմ, կատարվել են նաև ապրանք (ծառայություն)-ներկայացուցիչների տեխնիկական բնութագրերի՝ չափման միավորի, մակնիշի և այլ չափանիշների փոփոխություններ ու ճշգրտումներ: Սպառողական գների և գների ինդեքսների վերաբերյալ տվյալներն ամփոփվել են ըստ հանրապետության և 11 հետազոտվող բնակավայրերի՝ 65 ապրանքային խմբերով, ծառայությունների տեսակներով և 470 անվանում ապրանք (ծառայություն)-ներկայացուցիչներով:

Գյուղատնտեսական մթերքի իրացման ու արտադրության միջոցների գնման գների, ծավալների մասին գյուղացիական տնտեսությունների ընտրանքային հետազոտման միջոցով հավաքագրվող տեղեկատվության արժանահավատությունն ու ներկայացուցչականությունն ապահովելու նպատակով 2010 թվականի հունվարից վերանայվել է գյուղատնտեսության ոլորտում գների դիտարկման դաշտը՝ դիտարկման մեջ ներառելով 187 գյուղական համայնք, որոնցում հետազոտվող գյուղացիական տնտեսությունների ընդհանուր քանակը կազմում է 7480 (յուրաքանչյուր գյուղական համայնքում հետազոտվում է 40 գյուղացիական տնտեսություն): Դիտարկվող 61 անվանում գյուղատնտեսական մթերքի իրացման և 92 անվանում արտադրության միջոցների գնման գների մասին ստացված տվյալներն օգտագործվել են գյուղատնտեսական արտադրանքի իրացման, ինչպես նաև գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսների ամսական հաշվարկների իրականացման նպատակներով:

Արտաքին առևտրի (ներմուծման, արտահանման) գների ինդեքսների գծով իրականացված մեթոդաբանական կատարելագործման արդյունքում ամսական պարբերականությամբ իրականացվում է գների ինդեքսների հաշվարկ արտաքին առևտրի 3 հայտանիշներով՝ ըստ բոլոր երկրների, Անկախ պետությունների համագործակցության անդամ երկրների և ոչ ԱՊՀ երկրների: Միաժամանակ, «Ոչ ԱՊՀ երկրներ» խմբից իրականացվում է գների ինդեքսների հաշվարկ ըստ Եվրամիության երկրների:

Մասնակցություն է ցուցաբերվել 2011 թվականի տվյալներով ՀՆԱ-ի և ազգային արժույթի գնողունակության համարժեքության հաշվարկման միջազգային գլոբալ համադրումների ծրագրի շրջանակներում ԱՊՀ տարածաշրջանային համադրումների աշխատանքներին, ինչի վերջնական արդյունքները Համաշխարհային Բանկի կողմից կիրառարակվեն 2014 թվականին: Կազմակերպվել և իրականացվել են շուրջ 2460 անվանում սպառողական ապրանք-ծառայություն ներկայացուցիչների, շինանյութերի բաղադրամասերի և ներդրումային ապրանքների գների, ոչ շուկայական ծառայությունների քանակական և որակական ցուցանիշների մասին տեղեկատվության հավաքագրման, մուտքագրման, միջին տարեկան գների հաշվարկման աշխատանքներ: Գնադիտարկումներն եռամսյակային պարբերականությամբ կազմակերպվել և իրականացվել է Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում: Պատրաստվել են գնային տեղեկատվության մուտքագրման էլեկտրոնային աղյուսակներ: Համաշխարհային բանկի առաջարկով մեթոդաբանական օժանդակություն և աջակցություն է ցուցաբերվել Վրաստանի վիճակագիրներին՝ միջազգային գլոբալ համադրումների ծրագրի շրջանակներում երկկողմանի համադրումներ իրականացնելու համար:

«Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» խորագրով ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի շրջանակում պատրաստվել են տնտեսության տարբեր ոլորտների վերաբերյալ գների ինդեքսների Որակի հոչակագրեր (թվով 6 հոչակագիր), որոնք գետեղված են Ծառայության պաշտոնական կայքէջում, «Փաստաթղթավորում» բաժնում: Այս ծրագրի շրջանակում աշխատանքներ են տարվել ՀՀ-ում Եվրամիության օրենսդրությանը համահունչ հարմոնիզացված սպառողական գների ինդեքսների մեթոդաբանության մշակման և ներդրման համար: Միաժամանակ, իրականացվել են գործողություններ ազգային ՍԳԻ-ի բարելավման ուղղությամբ:

«Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» խորագրով ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի շրջանակում նախապատրաստվել և անցկացվել է սեմինար-խորհրդակցություն Ծառայության աշխատակիցների, գների դիտարկումով զբաղվող մասնագետների (վիճակագիրների), վիճակագրության մարզային գործակալությունների և արտաքին սպառողների մասնակցությամբ:

Հանդիպումներ են տեղի ունեցել ՀՀ ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարությունների, ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան մասնագետների հետ, իրականացվել են քննարկումներ ՀՀ-ում շինարարության գների ինդեքսների և անշարժ գույքի գների ինդեքսների հաշվարկման մեթոդաբանական հարցերի շուրջ:

Ծառայության պաշտոնական կայքէջի թարմացման և վերակակառուցման նպատակով պատրաստվել ու լրացվել են տնտեսության տարբեր ոլորտների վերաբերյալ գների ինդեքսների մասին տվյալների դինամիկ շարքեր:

Ազգային հաշիվներում, որպես դեֆլատորներ օգտագործման նպատակով, կատարվել է տնտեսության առանձին ճյուղերի գների ինդեքսների լրացուցիչ հաշվարկ՝ եռամսյակային (նախորդ եռամսյակի, նախորդ տարվա համապատասխան եռամսյակի համեմատ), տարեկան կտրվածքներով: Միաժամանակ, ՀՀ մակրոցուցանիշների վերահաշվարկման, մասնավորապես ՀՆԱ-ն հաստատուն գներով հաշվարկելու համար, իրականացվել է ամսական գների ինդեքսների լրացուցիչ հաշվարկ նախորդ տարվա նկատմամբ՝ ըստ ՀՆԱ-ի առանձին բաղադրատարրերի:

2.4.8. Աշխատանքի շուկա

Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչով սահմանված գործունեության տեսակների, Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) կողմից առաջադրվող սահմանումների, հասկացությունների և դասակարգումների ներդրման, ինչպես նաև գործող օրենսդրության պահանջներին համապատասխանեցման նկատառումներով պայմանավորված շարունակաբար կատարելագործվել են ամսական և տարեկան տվյալների մուտքագրման, սխալների հայտնաբերման, տրամաբանական ստուգման, ելքային աղյուսակների ստացման ալգորիթմները և համակարգչային մշակման ծրագրերը: Արդյունքում՝ ընդլայնվել է ելքային աղյուսակների ցանկը, ցուցանիշների մանրամասնեցման (դեզագրեզացման) աստիճանը՝ հավաքագրվող ցուցանիշների համախումբը հնարավորինս ամփոփելով նաև մարզային, տարածաշրջանային, գյուղ-քաղաք, գենդերային բաշխվածությամբ: Ընդլայնվել է էլեկտրոնային փոստով տեղեկատվություն ներկայացնող և սկզբնական տվյալներն էլեկտրոնային բազաներով ներկայացնող կազմակերպությունների թիվը, որի արդյունքում աճել է տեղեկատվության ներկայացման օպերատիվության մակարդակը, կրճատվել՝ համապատասխան հաշվետվային ձևերի տպաքանակը, բարձրացվել հավաքագրվող տվյալների որակը և աշխատանքի արտադրողականությունը:

Շարունակվել են Ծրագրով նախատեսված աշխատուժի ընտրանքային հետազոտությունները տնային տնտեսություններում և առևտրային կազմակերպություններում: Մասնավորապես.

1) Տնային տնտեսությունների կենսամակարդակի 2010-2012 թվականների հետազոտությունների շրջանակում իրականացվել են նաև աշխատուժի դիտարկումները, որոնց արդյունքները զետեղվել են «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցում՝ հայերեն և ռուսերեն, «Հայաստանի վիճակագրական տարեգրքում»՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն, «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» և «Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում» ժողովածուներում, «Հայաստանի կանայք և տղամարդիկ» վիճակագրական գրքույկ (հայերեն և անգլերեն) և մի շարք այլ հրապարակումներում:

Առաջնորդվելով Արժույթի միջազգային հիմնադրամի և Եվրամիության (այդ թվում՝ Եվրոստատի) փորձագետների կողմից տրված խորհրդատվությամբ, 2012 թվականի փետրվարից դադարեցվել է աշխատանքի շուկայի վիճակագրական ցուցանիշների (զբաղվածություն, գործազրկության մակարդակ, տնտեսապես ակտիվ բնակչություն, տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն, աշխատանքային ռեսուրսներ) հաշվարկն ըստ վարչական աղբյուրներից ստացվող վիճակագրական տեղեկատվության՝ հիմնվելով բացառապես աշխատուժի հետազոտության արդյունքների վրա, որը 2007 թվականից իրականացվում է տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության (SSYԱՀ) շրջանակում: Հետազոտության արդյունքներով հաշվարկված առանցքային ցուցանիշները հրապարակվել են եռամսյակային պարբերականությամբ:

2) Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ, տարեկան պարբերականությամբ իրականացվել է «Աշխատողների և աշխատավարձի դիտարկումն առևտրային փոքր և գերփոքր կազմակերպություններում» ընտրանքային հետազոտությունը, որի արդյունքներն օգտագործվել են վարձու աշխատողների անվանական միջին աշխատավարձը և զբաղվածների թվաքանակն ըստ տնտեսության հատվածների, գործունեության տեսակների և ՀՀ մարզերի հաշվարկելու համար:

Նոր խմբագրությամբ Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչին (ՏԳՏԴ) անցմամբ պայմանավորված, 2009-2010 թվականների ժամանակագրական շարքի համադրելիության նպատակով աշխատանքի վիճակագրության առանցքային ցուցանիշները զուգահեռաբար հաշվարկվել և վերահաշվարկվել են ըստ ՏԳՏԴ 1-ին և 2-րդ խմբագրությունների:

Համաձայն Ծառայության և Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ), ԱՄԿ, ԱՄՀ, ԱՊՀ վիճակագրական պետական կոմիտեի և այլ միջազգային կազմակերպությունների միջև կնքված տվյալների փոխանակման համաձայնագրերի, համապատասխան ձևաչափով տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ աշխատանքային ռեսուրսների հաշվեկշռի, տնտեսապես ակտիվ բնակչության, ըստ տնտեսական գործունեության ոլորտների և հատվածների զբաղվածության (այդ թվում՝ ոչ ֆորմալ), պաշտոնապես գրանցված աշխատանք փնտրողների և գործազուրկների, վարձու աշխատողների թվաքանակի, աշխատած մարդ-ժամերի քանակի, աշխատանքի վարձատրության, աշխատանք գնի, իրական աշխատավարձի ինդեքսների, աշխատավարձի ժամկետանց պարտքի, աշխատուժի շարժի և այլ ցուցանիշների վերաբերյալ:

Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի շրջանակում «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» նախագծի շրջանակում պատրաստվել է աշխատուժի հետազոտության, աշխատանքի գնի, վաստակի, աշխատաժամերի, անվանական աշխատավարձի (ամսական, տարեկան), թափուր աշխատատեղերի վերաբերյալ թվով ութ Որակի հոչակագրեր, որոնք զետեղված են

Ծառայության պաշտոնական կայքէջում: Նույն աշխատանքի շրջանակում Ծառայության պաշտոնական կայքէջի ArmStatBank-ի համար պատրաստվել են աշխատանքի վիճակագրության հիմնական ցուցանիշների երկլեզու ժամանակագրական շարքեր:

2012 թվականին ԱՄԿ և MasterCard հիմնադրամի Work4Youth ծրագրի շրջանակում իրականացվել է «Դպրոցից դեպի աշխատանք» միանվագ ընտրանքային հետազոտություն՝ աշխատանքի շուկայում երիտասարդների մասնակցության խորացված ուսումնասիրությամբ:

Համաշխարհային բանկի կողմից իրականացվող միջազգային համադրման ծրագրի շրջանակում, 2011 թվականի գնային հարաբերությունների կազմման և ազգային արժույթի գնողունակության համարժեքության հաշվարկման նպատակով 2012 թվականին պետական կառավարման ոլորտի 24 հիմնարկներից հավաքագրվել, մշակվել և ամփոփվել է ըստ զբաղմունքի տեսակների վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության վերաբերյալ տեղեկատվությունը:

ՀՀ աշխատանքի շուկան բնութագրող ցուցանիշների համախումբը, դրանց հաշվարկման մեթոդաբանությունը և ներկայացման ձևաչափը ԱՄԿ և Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատի) ստանդարտների հետ հնարավորինս ներդաշնակեցնելու նպատակով շարունակվել է ոլորտի վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրությունը: Արդյունքում՝ ՏՏԿԱՀ շրջանակում ՀՀ աշխատանքի շուկայի համակողմանի վերլուծության նպատակով մշակվել են բազմաթիվ նոր փոփոխականներ՝ հարստացնելով ոլորտը բնութագրող ցուցանիշների կազմը:

2010-2012 թվականներին հրապարակվել են նոր ցուցանիշներով համալրված «Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում» վիճակագրական ժողովածուները՝ հայերեն և անգլերեն: